


ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

պարսկական գիր. թեկնածու, ԵՊՀ, ՀԱԻ

**ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻՆ՝
ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ**



այ տպագրության երախտավոր Ոսկան Երեւանցու վանական գործունեությունը հիմնականում կապվում է Ուշիի Ս. Սարգիս վանքի վանահայրության հետ, սակայն պատմական մի վավերագրից մակաբերվում է այն իրողությունը, որ Ոսկան Երեւանցին առաջնորդ է եղել նաեւ Սաղմոսավանքում: Դրա մասին վկայում է Սիմեոն Երեւանցին. «Ինչպես նաեւ Քյարվանսարա կոչված գյուղի երեք դանկ մուլքը, որը մոտ է քարաշեն իջեւանատանը, եւ որի վերաբերյալ սրա առաջնորդ Ոսկան Երեւանցի վարդապետից կա մեկ վկայագիր թուղթ, որ գրված է հայոց 1110 (1661) թվին, որը եւս կարող ես գտնել»¹: Այդ վկայագիրը Հ. Աբրահամյանը գետեղել է հետեւյալ վերնագրի ներքո.

**ՔԱՐՎԱՆՍԱՐԱՎՆԱՆՔԻ ԳԻՒՂԻ «ԵՐԵՔ ՍՏԱԿ» ՍՈՒԼՔԸ³
ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ**

Պատճառ գրոյս այս է, զի ես՝ Ոսկան վարդապետս, յորժամ էի ի վանս Սաղմոսաց, զՔարվանսարայի երեք ստակ⁴ մուլքն կերի որքան էի անդ.

¹ Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբո: Հիշատակարան Էջմիածնի Սուրբ Աթոռի եւ նրա հարակից վանքերի, Երեւան, 2003, էջ 403-404:

² Քարվանսարան ներկայիս Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Արայի գյուղն է: Այդտեղ Վահէ Վաչուտյան իշխանի՝ ԺԳ. դարում կառուցած իջեւանատնից այսօր մասամբ պահպանվում է հյուսիսային պատը:

³ «Մուլք» (مُلْك) ծագում է արաբերենից եւ նշանակում «ունեցվածք», «սեփականություն»:

⁴ Ստակը՝ «սպիտակ», արծաթյա դրամի անվանումն էր (այն կարող էր նաեւ ոսկյա լինել): Բնագրում հոմանիշ է «դանգ»-ին: Վերջինս պարսկական դրամի քառորդ մասն էր (տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», հ. Ա., կազմ.՝ Սո. Մալխասեանց, Երեւան, 1944, էջ 458). պարսկական դրամը թունանն էր եւ հավասար էր 10.000 ոսկեդրամի կամ դինարի (տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», հ. Բ., կազմ.՝ Սո. Մալխասեանց, Երեւան, 1944, էջ 124-125): Հետեւապէս՝ Քարվանսարա գյուղի սեփականության արժեքը՝ երեք

քանզի ստակ եւ կես մուլքն Ազիբեկին եւ Տէր Շմաւոնին Հայրենիքն էին, որք ետուն Սաղմոսավանուցս վախմ, ստակ եւ կէսն այլ ես ի միրի Թումանիցն Հոգեբաժին առի վասն իւր Հօրն՝ Գրիգորին, որ էր որդի Կարապետին, որով եղեւ երէք ստակ մուլքն գիտովթեամբ ամենայն Սերգեւելցւոց: Ապա թէ որ այլ եւ այլ բանիւ զսա խափանել ջանայ, կամ Հակառակի, ինքն պարտական լիցի այն մեռելոց մեղաց. զի մէք այսպէս գիտեմք եւ վկայ եմք առաջի Աստուծոյ եւ մարդկան:

Գրեցաւ թուին ՌՃԺ. (1661). Յունուարի Ժ. (10)⁵:

Հետեւում՝ կնիքի վրա, գրված է. «Սուրբ Աստուածածնի ծառայ Ոսկան վարդապետ» մակագրությունը⁶: Վկայակոչված եկեղեցին Սաղմոսավանքի համալիրի Ս. Աստվածածին գրատունն է:

Հայտնի է, որ Ոսկան Երեւանցին 1654 թվականից եղել է Ուշիի Ս. Սարգիս վանքի վանահայրը, որտեղ իրականացրել է շինարարական լայնածավալ աշխատանքներ, կառուցել շրջապարիսպ, կրոնավորների խցեր, բնակելի եւ տնտեսական սենյակներ⁷: Սաղմոսավանքի առաջնորդը, Ոսկան Երեւանցուց առաջ եւ հետո, Գաբրիել վարդապետ Կարբեցին էր: Վերջինիս հորեղբայրը՝ նշանավոր ճգնակյաց հոգեւորական Հովհաննես եպս. Կարբեցին, մոտ 1656 թ. նրան կանչում է էջմիածնի նվիրակությունից, հանձնում Սաղմոսավանքի վանահայրությունը, իսկ ինքը մեկնում Շատինի վանք՝ տեղի կրոնավորներին սովորեցնելու անապատական կյանքի կանոնները: Տրամաբանական է, որ Հովհաննես եպս. Կարբեցու մահից հետո (1657 թ.) եղբորորդին՝ Գաբրիել վարդապետը, շարունակեր պաշտոնավարել Սաղմոսավանքում: Նշենք, որ Գաբրիել Կարբեցին Սաղմոսավանքում կարողացավ անել այն, ինչը չէր հաջողվել նախորդ վանահայրերին: Լինելով նախաձեռնող, հաստատակամ ու եռանդուն անձնավորություն՝ նա 1664-1670 թթ. ամբողջովին վերանորոգեց Սաղմոսավանքի վանական համալիրը, որը մեծապես տուժել, ավերվել էր թուրքական 1632-1635 թթ. արշավանքի ժամանակ: Գաբրիել վրդ. Կարբեցին իր հեղինակությունը չնորհիվ կարողացել է վերանորոգչական աշխատանքներում ներգրավել անգամ գավառի մահամեղական իշխանավորներին⁸:

ստակը կամ դանգը, 7500 դինար էր: Մի շարք կավածագրերից ակնհայտ է, որ այդ ընթացքում գործածական է եղել արծաթյա դինարը:

⁵ «Կավածագրեր եւ տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ I, կազմ.՝ Հ. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 20:

⁶ Անդ:

⁷ Տնն Ֆ. Բարսյան, Ուշիի Սուրբ Սարգիս վանքը, Երևան, 2005, էջ 9-10:

⁸ Տնն Ա. Մանուչարյան, Սաղմոսավանք, Сормосаванк, Saghmosavank, Երևան, 2015, էջ 66:

Սակայն, ինչպես աղբյուրներն են վկայում, Գաբրիել վարդապետի վանահայրությունը Սաղմոսավանքում մեզ անհայտ պատճառներով կարճ ժամանակով ընդմիջվել է ոչ պակաս եռանդուն եւ Հանրություն լայն շրջաններին առավելապես տպագրական գործունեությունում ծանոթ Ոսկան Երեւանցու առաջնորդությամբ:

Մնում է ենթադրել, որ որպես նվիրակ փորձառություն ունեցող Գաբրիել վրդ. Կարբեցին Մայր Աթոռի Հատուկ Հանձնարարականով մեկնել է ինչ-որ երկիր՝ Հայկական գաղթօջախ: Իսկ այդ ընթացքում Սաղմոսավանքի վանահայրությունը ժամանակավորապես վստահվել է Ոսկան վարդապետին, որը, ըստ էության, Համատեղել է հիշյալ մենաստանի եւ Ուշիի վանահայրությունը: Համանման իրողությունն ակնատեսն ենք Գրիգոր վրդ. Կարբեցու հաջորդի՝ Նահապետ վրդ. Նգացու (1674-1683 թթ.) պարագայում, երբ վերջինս միաժամանակ վանահայր էր Սաղմոսավանքում, Հովհաննավանքում եւ Ուշիում⁹: Ոսկան Երեւանցին Սաղմոսավանքի հոգեւոր առաջնորդ է եղել բավականին կարճ ժամանակահատված՝ մեր հաշվարկով մոտ մեկ տարի. նրա համար նախասահմանված էր առավել կարեւոր՝ համազգային առաքելություն: Այդ ընթացքում նա հասցրել էր իր հետքը թողնել Սաղմոսավանքի պատմության մեջ. մեկ տարում կարողացել է ընդլայնել լուսավորչաչեն այդ մենաստանի վանական կալվածատիրության սահմանները՝ վանքի համար ձեռք բերելով Քարվանսարա գյուղը, ընդ որում, հիշյալ բնակավայրի սեփականություն կեսն ստացել է նվիրատվության ձեռով, երբ համասեփականատերեր Ազիբեկը կամ Ազի բեկը (հնարավոր է՝ եղել է Կարբիի «նահիայի»՝ գավառակի իշխանավորներից) ու Տեր Շմավոնն իրենց մասնաբաժինը՝ մեկուկես ստակ մուլքը, վախճ են¹⁰ արել, այսինքն՝ նվիրաբերել են Սաղմոսավանքին: Իսկ Քարվանսարա գյուղի մյուս կեսը, ինչպես վերոհիշյալ կալվածագիրն է հայտնում, վանահայր Ոսկան Երեւանցին ստացել է «ի միրի»¹¹ Թումանից՝ որպես վերջինիս հոր հոգեբաժին: Բնագրի՝ «գիտությունում ամենայն Սերգեւելցւոց» հատվածը, կարծում ենք, պետք է հասկանալ՝ սերկեւելցիների¹² իմացությամբ, վկայությամբ:

⁹ Տե՛ս «Զարբախայ Սարկապահ Պատմագրութիւն», հ. Գ., Վաղարշապատ, 1870, էջ 31:

¹⁰ «Վախմ» (خام) ունի արաբական ծագում, որ նշանակում է «պատվել», «մեծարել»:

¹¹ «Միր» անհասկանալի բառի հիմքում, կարծում ենք, օտար «mer», «mep»՝ «քաղաքագլուխ», իմաստն է: Այն կալվածագրում պետք է հասկանալ «գեղջակագ»:

¹² Սերկեւի կամ Սերկեւի (Սերկեւելի) գյուղի ավերակները երևում են Օհանավանի հյուսիսարևելյան մասում: Գյուղը հայտնի է դարձել 1021 թ. հայ-սելջուկյան հաղթական ճակատամարտից հետո՝ Վահան Պախլավունի զորապետի պատահական սպանությամբ մի փախստական սերկեւիցու ձեռքով (տե՛ս Մատթեոս Ուռայեցի, Ժամանակագրու-

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Ոսկան Երեւանցին հայտնի է ոչ միայն հայ տպագրական գործին իր նվիրումով, Ուշիի վանքում ժրաջան վանահայրությամբ, այլ նաեւ ակնառու տեղ է զբաղեցրել Սաղմոսավանքի պատմության մեջ: Ոսկան արք. Երեւանցին պատասխանատու, նվիրյալ, եռանդուն եւ ջանասեր հոգեւորականի օրինակելի կերպար է, որի կազմակերպչական ունակություններն ու տաղանդը մշտապես փայլել են, ուր էլ որ ծառայել է, ինչ առաքելություն էլ որ իրականացրել է:

РЕЗЮМЕ

Деятельность архимандрита Воскана Ереванци в основном связана с армянским книгопечатанием и настоятельством в монастыре Уши. Но из одной купчей крепости выясняется, что он в 1661 г. был настоятелем монастыря Сагмосаванк. Здесь он в течение своего короткого духовного служения успел приобрести для монастыря право собственности на село Карвансара (ныне Арайи).

SUMMARY

Archimandrite Voskan of Yerevan is particularly noted for his works carried out in the publishing field, as well as for his service as bishop in ordinary (or Ordinary Bishop?) in the monastery of Ushi. From one of the property papers we learn that in 1661 he used to be the bishop in ordinary of Saghmosavank. During the short period of his service he managed to get permission to make the village of Karvansara (nowadays Ara village) possession of the monastery.



թյուն, գրաք. բնագ.՝ Մ. Մելիք-Ադամյանի եւ Ն. Տեր-Միքայելյանի, աշխ. թարգմ. եւ ներած.՝ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1991, էջ 18-20), իսկ 1599 թ. այդտեղ ծագում է աղանդ (տե՛ս Ա. Մանուչարյան, Սերկելիլ գյուղի աղանդի մասին, ԵՊՀ աստված. ֆակուլտետ, «Տարեգիրք», 2014, Թ., էջ 142-150):